1. Ահա տեսեք՝ Գառն Աստծո
Խաչին վրա, (2)
Արյուն թափեց վասն մարդոյ
Խաչին վրա, (2)
Ո՛հ, լսեցե՛ք գոչումն. «Էլի՛,
Էլի՛, լամա՞ սաբաքթանի»:
Տեսեք Փրկիչն, որ կմեռնի
Խաչին վրա (2):

2. Տեսե՛ք տարածյալ բազուկներն
Խաչին վրա, (2)
Արյունահոս կողն ու ձեռքերն
Խաչին վրա, (2)
Խավարեցավ լույսն արեգին,
Խավար պատեց զերկիր, զերկին,
Երբ որ Հիսուս հաղթեց դևին
Խաչին վրա (2):

3. Արդ գործն վսեմ կատարեցավ
Խաչին վրա, (2)
Մեծ հաղթություն Ինքն ստացավ
Խաչին վրա, (2)
Նվաղյալ աչքերն հերկինս
ուղղած՝
Գոչեց. «Ամենն է կատարյալ»:
Հայնժամ, Հոգին առ Հայրն
հանձնած,
Ո՛հ, մեռավ խաչին վրա:

4. Մ՛հ, ուր երթամ, պիտի
պատմեմ՝
Զոհն Փրկչին խաչին վրա,
Կուրախանամ, երբ կլսեմ՝
Զոհ Փրկչին խաչին վրա:
Այո՛, հավետ այս է հավատքս
Հիմա և միշտ ու հավիտյան,
Թե պարգևեց Հիսուսն ինձ կյանք
Խաչին վրա (2):